Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Արայիկ Հարությունյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Թբիլիսի (Վրաստան), 2019 թվականի փետրվարի 19-20

4. **Հրավիրող կողմը.**

Հայ-Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմ, «Ջավախքին աջակցություն» հիմնադրամ:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառմանը և Նինոծմինդա շրջանի Հեշտիա գյուղում ԱրՄաթ ինժեներական լաբորատորիայի բացման արարողությանը:

6. **Քննարկված թեմաները.**

Հայ-Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմի հրավերով 2019թ. փետրվարի 19-20-ը գործուղվել էի Թբիլիսի (Վրաստան)՝ մասնակցելու Վրաստանի Խորհրդարանի գրադարանում կայացած Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառմանը և Նինոծմինդա շրջանի Հեշտիա գյուղում փետրվարի 20-ին ԱրՄաթ ինժեներական լաբորատորիայի բացման արարողությանը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Թբիլիսիում կազմակերպված միջոցառման շրջանակներում՝ Հայ-վրացական բարեկամության մեծ ջատագով Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին նվիրված շնորհավորական ուղերձներ հնչեցին Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության նախագահների անունից, ինչպես նաև իմ կողմից և այլ գերատեսչությունների ղեկավարների ու կառույցների

ներկայացուցիչների կողմից: Միջոցառմանը ներկա էր Թումանյանի ծոռնուհին՝ Ելենա Կոլեսնիկովան, իսկ մյուս ծոռնուհին՝ Իրմա Սաֆրազբեկյանը, Գերմանիայից հղել էր իր շնորհավորանքի և երախտիքի ուղերձը:

Միջոցառմանը օրհնության և գնահատանքի խոսքով հանդես եկավ Վիրահայոց թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, ով շնորհավորելով ներկաներին՝ գնահատանքի խոսքեր ուղղեց կազմակերպիչներին՝ ի դեմս հոբելյանական հանձնախմբի:

Անդրադարձ եղավ Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակներին նվիրված բոլոր այն աշխատանքներին, որոնք իրականացվել և իրականացվելու են Հայաստանում, կարևորվեց Վիրահայոց թեմի հետ մեկնարկած աշխատանքային ակտիվ համագործակցությունը և հետագա անելիքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում ծանոթացա հայկական պատմամշակութային ժառանգության պահպանության խնդիրներին և Վիրահայոց թեմի ենթակայությամբ գործող համանուն կենտրոնի գործունեությանը: Հայկական պատվիրակությունը հյուրընկալվեց «Հովհ. Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում, ծանոթացավ Թումանյանի տան պատմության, այնտեղ ցուցադրված ցուցանմուշների, ինչպես նաև Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Դավիթ Ճիճինաձեի կողմից «Հովհ. Թումանյանի տուն» կենտրոնին նվիրած Ամենայն հայոց բանաստեղծի 150-ամյակի հոբելյանի կապակցությամբ նվիրած բրոնզաձույլ արձանին:

Կազմակերպվեց նաև այցելություն Թբիլիսիի հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն, իրենց հարգանքի տուրքը մատուցելով, ինչպես Ամենայն հայոց բանաստեղծին, այնպես էլ այնտեղ թաղված հայոց մեծերին:

2019թ. փետրվարի 19-20-ը այցը Վրաստան կարևոր էր ինչպես Հայաստան-սփյուռք համագործակցությունը և մշակութային կապերը ակտիվացնելու, այնպես էլ Վրաստանի գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությունը

սերտացնելու, նոր կապեր և պայմանավորվածություններ ձեռքբերելու ու համատեղ ծրագրեր մշակելու առումով:

Վրաստանում ՀՀ դեսպանության միջոցով բանավոր փոխանցվել է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ ս.թ. մարտի վերջին Վրաստան պաշտոնական այցի հրավերը, որի ընթացքում նախատեսվում է ԱրՄաթ 3-րդ լաբորատորիայի համատեղ բացումը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

1) մասնակցություն Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառմանը,
2) ծանոթություն հայկական պատմամշակութային ժառանգության պահպանության խնդիրներին և Վիրահայոց թեմի ենթակայությամբ գործող համանուն կենտրոնի գործունեության հետ,
3) Հայաստան-սփյուռք համագործակցության և մշակութային կապերի ակտիվացում,
4) Վրաստանի գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության սերտացում,
5) նոր կապերի և համագործակցության պայմանավորվածությունների ձեռքբերում, համատեղ ծրագրերի մշակման և իրականացման հնարավորություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.02.2019